ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 115-Ա 05 մարտի 2025 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 1-3-ՐԴ ԵՎ 4 -6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԻՋԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ «ՍՊՈՐՏԼԱՆԴԻԱ» ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի, «Մանկապատանեկան սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 16-րդ հոդվածի պահանջներով ու հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հոկտեմբերի 10-ի N 2117-Ա/2 հրամանը

որոշում եմ՝

1.Հաստատել

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների աշակերտների միջև 2025 թվականին անցկացվող «Սպորտլանդիա» մարզական միջոցառման համայնքային և մարզային փուլերի կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների աշակերտների միջև 2025 թվականին անցկացվող «Սպորտլանդիա» մարզական միջոցառման համայնքային փուլի անցկացման մրցավարական հանձնաժողովների կազմը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների աշակերտների միջև 2025 թվականին անցկացվող «Սպորտլանդիա» մարզական միջոցառման մարզային փուլի անցկացման մրցավարական հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների աշակերտների միջև 2025 թվականին

անցկացվող «Սպորտլանդիա» մարզական միջոցառման համայնքային և մարզային փուլերի անցկացման ժամանակացույցը՝ համաձայն N 4 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Լուսինե Վարդանյանին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների աշակերտների միջև 2025 թվականին անցկացվող «Սպորտլանդիա» մարզական միջոցառման համայնքային և մարզային փուլերի մրցումների անցկացման օրերին համապատասխան հաստատություններում ապահովել մասնակիցների առաջին բժշկական օգնությունը:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Մարինե Գյարզոյանին՝ միջոցառման անցկացման գործընթացն իրականացնելու համար ապահովել սույն որոշման և միջոցառման կանոնակարգի առաքումը հանրակրթական դպրոցներ:

05.03.2025

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ք. Գավառ

Հավելված N1
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի

2025 թվականի մարտի 5 -ի

N 115-Ա որոշման

ԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների աշակերտների միջև 2025 թվականին անցկացվող «Սպորտլանդիա» մարզական միջոցառման համայնքային և մարզային փուլերի կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի

Զազյան Կարեն - մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ /նախագահ /

Վարդանյան Լուսինե - մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ

Չարվադարյան Գեղամ – մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

Շահբազյան Հասմիկ - մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ

Դաշտոյան Գրիգոր - Գավառի համայնքապետի առաջին տեղակալ /համաձայնությամբ/

Ղազարյան Խանում – Մարտունու Ս. Դարբինյանի անվան N2 հիմնական դպրոցի տնօրեն

Հովեյան Վանիկ - Գավառի Գրիշա Վահանի Ափրոյանի անվան մարզադպրոցի տնօրեն /համաձայնությամբ/

Պիպոյան Ռուզաննա - Գավառի Հ. Թումանյանի անվան N3 հիմնական դպրոցի տնօրեն

Ավետիսյան Գարիկ - Սևանի Ն.Դագարյանի անվան մարզադպրոցի տնօրեն

Խլոյան Սոֆյա - Վարդենիսի Էդ . Պողոսյանի անվան N2 հիմնական դպրոցի տնօրեն

Մկրտչյան Արմինե - Ճամբարակի ավագ դպրոցի տնօրեն /համաձայնությամբ/

Ստորագրող
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
2201650098

2025-03-04 18:43:55 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված N2
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2025թ մարտի 5 -ի
N 115-Ա որոշման

ԿԱԶՄ
Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների աշակերտների միջև 2025 թվականին անցկացվող «Սպորտլանդիա» մարզական միջոցառման համայնքային փուլի մրցավարական հանձնաժողովների

Գավառի տարածաշրջան

Դադոյան Վ. - մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ /պատասխանատու/
Սարգսյան Ս. – Գավառ քաղաքի Պ.Ղանդիլյանի անվան N 2 միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /համաձայնությամբ/
Ղուրշուդյան Ե. - Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N 8 միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /համաձայնությամբ/
Բաղեյան Գ. - Գավառ քաղաքի Հ. Թումանյանի անվան N 3 հիմնական դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /համաձայնությամբ, գլխավոր մրցավար/
Վարդանյան ՅՈՒ.- Նորատուս գյուղի N 3 միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /համաձայնությամբ/
Թորոյան Գ. -- Սարուխան գյուղի Ս. Մակարյանի անվան անվան N 1 միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /համաձայնությամբ /

Մարտունու տարածաշրջան

Գևորգյան Գ. - մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ /պատասխանատու/
Ջիվանյան Հ. - Մարտունու Մ. Մելիք-Շահումյանցի անվան N 1 հիմնական դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /համաձայնությամբ, գլխավոր մրցավար /
Մովսիսյան Վ.– Զոլաքար գյուղի N 1 միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /համաձայնությամբ/
Պետրոսյան Մ. – Գեղհովիտ գյուղի Ալ. Մյասնիկյանի անվան N 1 միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /համաձայնությամբ/
Զիրոյան Վ. – Վարդենիկի Ս. Մխոյանի անվան կրթահամալիրի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /համաձայնությամբ/
Մուրադյան Ռ. - Վերին Գետաշենի N 1 միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /համաձայնությամբ /

Վարդենիսի տարածաշրջան

Արզաքանցյան Ա. - մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ /պատասխանատու/
Ասատրյան Մ.- Վանևան գյուղի միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /համաձայնությամբ, գլխավոր մրցավար/
Սիմոնյան Ա.. - Վարդենիսի Էդ. Պողոսյանի անվան N 2 հիմնական դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /համաձայնությամբ /
Սահակյան Ռ. - Վարդենիսի N 3 հիմնական դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /համաձայնությամբ/
Մկրտչյան Տ. - Ակունք գյուղի միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /համաձայնությամբ /

Ճամբարակի տարածաշրջան

Սաֆարյան Հ. - մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ /պատասխանատու/

Սարիբեկյան Վ.- Թթուջուր գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն

Լազարյան Վահագ - Ճամբարակի մարզադպրոցի տնօրեն /համաձայնությամբ, գլխավոր մրցավար/

Ղազարյան Ն. - Ճամբարակի Մ.Քոչարյանի անվան N 2 հիմնական դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /համաձայնությամբ/

Դանիելյան Դ. – Ճամբարակ քաղաքի N 4 միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /համաձայնությամբ/

Հովհաննիսյան Բ.- Ճամբարակի ավագ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /համաձայնությամբ/

Սևանի տարածաշրջան

Լալազարյան Գ. - մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ /պատասխանատու/

Ավետիսյան Գ. - Սևանի Ն. Դագարյանի անվան մարզադպրոցի տնօրեն /համաձայնությամբ, գլխավոր մրցավար /

Խաչատրյան Փ. – Սևանի Վ. Կարապետյանի անվան N 3 հիմնական դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /համաձայնությամբ/

Վարդանյան Հ.– Սևանի N4 հիմնական դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /համաձայնությամբ/

Պետրոսյան Ս. – Սևանի Մեսրոպ Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /համաձայնությամբ/

Ստորագրող
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
2201650098

2025-03-04 18:44:57 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված N3
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի

2025 թվականի մարտի 5 -ի

N 115-Ա որոշման

ԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների աշակերտների միջև 2025 թվականին անցկացվող «Սպորտլանդիա» մարզական միջոցառման մարզային փուլի անցկացման մրցավարական հանձնաժողովի

Չարվադարյան Գ. - մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ /պատասխանատու/

Վարդանյան Ս. - ՀՀ Գեղարքունիքի մարզային մարզադպրոցի տնօրեն

Ավետիսյան Գ. - Սևանի Ն. Դագարյանի անվան մարզադպրոցի տնօրեն /համաձայնությամբ/

Առաքելյան Ա. - Ծովազարդ գյուղի միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /համաձայնությամբ /

Ղուրշուդյան Ե. – Գավառի Մ. Բունիաթյանի անվան N 8 միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /համաձայնությամբ /

Սարգսյան Ս. – Գավառ քաղաքի Պ. Ղանդիլյանի անվան N2 միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /համաձայնությամբ /

Ասատրյան Մ.- Վանևան գյուղի միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /համաձայնությամբ /

Բաղեյան Գ. - Գավառ քաղաքի Հ. Թումանյանի անվան N3 հիմնական դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /գլխավոր մրցավար/

Խաչատրյան Փ. – Սևանի Վ. Կարապետյանի անվան N 3 հիմնական դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /համաձայնությամբ/

Լազարյան Վահագ - Ճամբարակի մարզադպրոցի տնօրեն /համաձայնությամբ/

Ստորագրող
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
2201650098

2025-03-04 18:46:19 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված N4
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի

2025 թ մարտի 5 -ի
N 115-Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների աշակերտների միջև 2025 թվականին անցկացվող «Սպորտլանդիա» մարզական միջոցառման համայնքային և մարզային փուլերի անցկացման

Հ/Հ	ԴՊՐՈՑԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈՒԼԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԸ, ԱՄԻՍԸ	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՍՊՈՐՏԼԱՆԴԻԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԸ	ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՍՊՈՐՏԼԱՆԴԻԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՄԻՍԸ, ՕՐԸ , ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԸ
1.	Գավառի N 1 հ/դ	1-3-րդ դասարան՝ ապրիլի 1-ին 4-6-րդ դասարան՝ ապրիլի 3-ին	**Գավառի Հ. Թումանյանի անվան N3 հիմնական դպրոց ժամը 12:00-ին**	**1-3-րդ դասարանների աշակերտների միջև անցկացվող մրցումներ՝ 2025թվականի ապրիլի 16-ին, Մարտունու Ս. Դարբինյանի անվան N2 հիմնական դպրոցում ժամը՝ 12:00-ին**
2.	Գավառի N 2 մ/դ			
3.	Գավառի N 3 հ/դ			
4.	Գավառի N 4 հ/դ			
5.	Գավառի N 5 հ/դ			
6.	Գավառի N 7 մ/դ			
7.	Գավառի N 8 մ/դ			
8.	Լճափի մ/դ			
9.	Ծովազարդի մ/դ			
10.	Հայրավանքի մ/դ			
11.	Գեղարքունիքի մ/դ			
12.	Լանջաղբյուրի մ/դ			
1.	Սարուխանի N 1 մ/դ	1-3-րդ դասարան՝ ապրիլի 2-ին 4-6-րդ դասարան՝ ապրիլի 4-ին		
2.	Սարուխանի N 2 մ/դ			
3.	Սարուխանի N 3 մ/դ			
4.	Գանձակի N 1 մ/դ			
5.	Գանձակի N 2 մ/դ			
6.	Կարմիրգյուղի N1 մ/դ			
7.	Կարմիրգյուղի N2 մ/դ			
8.	Նորատուսի N1 մ/դ			
9.	Նորատուսի N2 մ/դ			
10.	Նորատուսի N3 մ/դ			
11.	Ծաղկաշենի մ/դ			
1	Սևանի N1 հ/դ	1-3-րդ դասարան՝ ապրիլի 1-ին 4-6-րդ դասարան՝ ապրիլի 3-ին	**Սևանի Ն. Դագարյանի անվան մարզադպրոցում ժամը 12:00-ին**	
2	Սևանի N2 հ/դ			
3	Սևանի N3 հ/դ			
4	Սևանի N4 հ/դ			
5	Սևանի N5 մ/դ			
6	Սևանի N6 մ/դ			
7	Զովաբերի մ/դ			
8	Գագարինի մ/դ			
9	Ծաղկունքի բաց դպրոց			
1	Գեղամավանի մ/դ	1-3-րդ դասարան՝ ապրիլի 2-ին 4-6-րդ դասարան՝ ապրիլի		
2	Վարսերի մ/դ			
3	Լճաշենի մ/դ			
4	Ծովագյուղի մ/դ			
5	Դդմաշենի մ/դ			
6	Նորաշենի հ/դ			

7	Չկալովկայի մ/դ	4-ին		
8	Սեմյոնովկայի հ/դ			
1	Մարտունի քաղաքի N1 հ/դ	1-3-րդ դասարան՝ ապրիլի 1-ին 4-6-րդ դասարան՝ ապրիլի 3-ին	**Մարտունու Ս. Դարբինյանի անվան N2 հիմնական դպրոցում ժամը՝ 12-00-ին**	**4-6-րդ դասարանների աշակերտների միջև անցկացվող մրցումներ՝ 2025 թվականի ապրիլի 18-ին, Գավառի Գրիշա Վահանի Ափրոյանի անվան մարզադպրոցում ժամը՝ 12:00-ին**
2	Մարտունու N2 հ/դ			
3	Երանոսի N1 մ/դ			
4	Երանոսի N2 մ/դ			
5	Վարդաձորի մ/դ			
6	Զորագյուղի հ/դ			
7	Ծակքարի մ/դ			
8	Ծովասարի մ/դ			
9	Լիճքի մ/դ			
10	Մադինայի մ/դ			
11	Վ.Գետաշենի N1 մ/դ			
12	Վ.Գետաշենի N2 մ/դ			
13	Ն.Գետաշենի N1 մ/դ			
14	Ն.Գետաշենի N2 մ/դ			
1	Գեղհովիտի N1 մ/դ	1-3-րդ դասարան՝ ապրիլի 2-ին 4-6-րդ դասարան՝ մարտի 4-ին		
2	Գեղհովիտի N2 մ/դ			
3	Ծովինարի տ/դ			
4	Վաղաշենի մ/դ			
5	Աստղաձորի մ/դ			
6	Զոլաքարի N1 մ/դ			
7	Զոլաքարի N2 մ/դ			
8	Վարդենիկի N1 հ/դ			
9	Վարդենիկի կրթահամալիր			
10	Վարդենիկի N2 հ/դ			
11	Ծովինարի մ/դ			
12	Արծվանիստի մ/դ			
13	Լիճքի հ/դ			
14	Լեռնահովիտի հ/դ			
1	Վարդենիսի N2 հ/դ	1-3-րդ դասարան՝ ապրիլի 1-ին 4-6-րդ դասարան՝ ապրիլի 3-ին	**Վարդենիսի Էդ . Պողոսյանի անվան N2 հիմնական դպրոցում ժամը 12:00-ին**	
2	Վարդենիսի N 3հ/դ			
3	Վարդենիսի N 4հ/դ			
4	Մ.Մասրիկի մ/դ			
5	Փ.Մասրիկի մ/դ			
6	Գեղամասարի մ/դ			
7	Փամբակ-Դարանակի մ/դ			
8	Արփունքի մ/դ			
9	Ախպրաձորի մ/դ			
10	Նորակերտի մ/դ			
11	Կարճաղբյուրի մ/դ			
12	Ծովակի մ/դ			
13	Այրքի մ/դ			
14	Սոթքի մ/դ			
15	Շատջրեքի մ/դ			
1	Ակունքի մ/դ			
2	Խաչաղբյուրի մ/դ			
3	Կութի մ/դ			
4	Շատվանի մ/դ			
5	Վանևանի մ/դ			
6	Արեգունու մ/դ			

8	Մաքենիսի մ/դ	1-3-րդ դասարան՝ ապրիլի 2-ին 4-6-րդ դասարան՝ ապրիլի 4-ին		
9	Կախակնի մ/դ			
10	Լուսակունքի մ/դ			
11	Կուտականի մ/դ			
12	Տրետուքի մ/դ			
13	Նորաբակի մ/դ			
14	Ջաղացաձորի մ/դ			
15	Լճավանի մ/դ			
16	Գեղամաբակի հ/դ			
17	Ավազանի հ/դ			
18	Ազատի հ/դ			
1	Ճամբարակի N 1հ/դ	1-3-րդ դասարան՝ ապրիլի 3-ին 4-6-րդ դասարան՝ ապրիլի 5-ին	**Ճամբարակի ավագ դպրոցում ժամը 12:00-ին**	
2	Ճամբարակի N2 հ/դ			
3	Ճամբարակի N 4մ/դ			
4	Վահանի մ/դ			
5	Թթուջրի մ/դ			
6	Գետիկի մ/դ			
7	Մարտունի գյուղի մ/դ			
8	Այգուտի մ/դ			
1	Դպրաբակի մ/դ	1-3-րդ դասարան՝ ապրիլի 4-ին 4-6-րդ դասարան՝ ապրիլի 6-ին		
2	Կալավանի մ/դ			
3	Անտառամեջի մ/դ			
4	Աղբերքի մ/դ			
5	Շողակաթի մ/դ			
6	Դրախտիկի մ/դ			
7	Արտանիշի մ/դ			
8	Ջիլի մ/դ			

Ստորագրող
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
2201650098

2025-03-04 18:48:01 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԿՑԱՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
08428824

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 2128-Ա/Հ. «19» Հոկտեմբերի 2024 թ.

2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ 1-3-ՐԴ ԵՎ 4-6 ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ «ՍՊՈՐՏԼԱՆԴԻԱ»» ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «ա», «գ» և «ժ.1» կետերի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել 2025 թվականին անցկացվող՝ «Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների աշակերտների միջև անցկացվող «Սպորտլանդիա»» մարզական միջոցառման՝

1) կանոնակարգը՝ համաձայն հավելվածի № 1-ի,

2) մասնակցության հայտի օրինակելի ձևը՝ համաձայն հավելվածի № 2-ի:

11/19/2024

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169 Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված № 1

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2024 թվականի նոյեմբերի 19 -ի

№ 2128-ի - Ա/2 հրամանի

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ
2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՆՑԿԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ 1-3-ՐԴ ԵՎ 4-6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ «ՍՊՈՐՏԼԱՆԴԻԱ»» ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ

I. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. 2025 թվականի անցկացվող «Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների աշակերտների միջև անցկացվող «Սպորտլանդիա»» մարզական միջոցառման (այսուհետ՝ Միջոցառում) նպատակն է՝

1) անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացում, դպրոցահասակ երեխաների առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում.

2) դպրոցական տարիքի երեխաների շրջանում տարբեր մարզաձևերով մարզվելու կողմնորոշման պայմանների ընձեռում:

2. Խնդիրներն են՝

1) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով դպրոցահասակ երեխաների առողջության ամրապնդում, նրանց ֆիզիկական որակների բարելավում,

2) դպրոցական տարիքի երեխաների շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզչություն, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի կարևորում,

3) դպրոցական տարիքի երեխաների համար ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար նպաստավոր պայմանների ստեղծում,

4) հանրակրթական դպրոցներում ֆիզկուլտուրային, առողջարարական և զանգվածային մարզական աշխատանքների կազմակերպման խթանում:

II. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՎԱՅՐԸ

3. Միջոցառումն անցկացվելու է 4 փուլով՝

1) 1-ին փուլ՝ հանրակրթական դպրոցներում՝ 2025 թվականի փետրվար-մարտ ամիսներին,

2) 2-րդ փուլ՝ Հայաստանի Հանրապետության համայնքներում և Երևան քաղաքի վարչական շրջաններում՝ 2025 թվականի մարտի 10-ից 30-ը,

3) 3-րդ փուլ՝ Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում՝ 2025 թվականի ապրիլի 10-25-ը,

4) 4-րդ՝ հանրապետական եզրափակիչ փուլի մրցումներ՝ 1-3-րդ դասարանների աշակերտների միջև 2025 թվականի **մայիսի 1-ից 3-ը՝** և 4-6-րդ դասարանների աշակերտների միջև՝ **մայիսի 5-ից 7-ը՝ Վանաձոր** քաղաքում:

4. 2-րդ և 3-րդ փուլերի մրցումների անցկացման համար տրվում է 1 օր:

5. Մրցույթի համայնքային և մարզային փուլերի անցկացման ժամանակացույցը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն) մինչև 2025 թվականի ապրիլի 28-ը:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

6. Միջոցառման անցկացման աշխատանքները համակարգում է Նախարարությունը:

7. Մրցումների 1-ին՝ ներդպրոցական փուլի անցկացման հսկողությունը իրականացնում են Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերը և Երևանի քաղաքապետարանը: Մրցումների 2-րդ փուլի կազմակերպման և անցկացման աշխատանքները համայնքներում իրականացնում են համայնքապետարանները և Երևան քաղաքի վարչական շրջանները: Մրցումների 3-րդ փուլի կազմակերպման և անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում են Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերը և Երևանի քաղաքապետարանը, իսկ 4-րդ՝ հանրապետական եզրափակիչ փուլի կազմակերպման և անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում է Նախարարությունը:

IV. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

8. Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության մարզերի 42 քաղաքներում (տարածաշրջաններում), Երևան քաղաքի 10 վարչական շրջաններում:

4. Խաղերի անցկացման վայրը՝

1) Արագածոտնի մարզ – **<u>ք. Աշտարակ</u>**՝ (Աշտարակի 35 բնակավայր և Շամիրամ համայնք), **<u>ք. Ապարան</u>**՝ (22 բնակավայր), **<u>Ծաղկահովիտ՝</u>** (Ծաղկահովտի 10 բնակավայր և Ալագյազ համայնք), **<u>ք. Թալին</u>**՝ (Թալինի 34 բնակավայր, Արևուտ և Մեծաձոր համայնքներ),

2) Արարատի մարզ - **<u>ք. Արտաշատ՝</u>** (Արտաշատի 39 բնակավայր), **<u>ք. Արարատ՝</u>** (Արարատի 13 բնակավայր), **<u>ք. Մասիս՝</u>** (Մասիսի 39 բնակավայր), **<u>ք. Վեդի՝</u>** (Վեդիի 19 բնակավայր, Վերին Դվին համայնք),

3) Արմավիրի մարզ - **<u>ք. Արմավիր</u>**՝ (Արմավիրի 11 բնակավայր և Բաղրամյան համայնք), **<u>ք. Վաղարշապատ</u>**՝ ք. (Վաղարշապատ, Փարաքար, Արաքս և Ֆենիկ համայնքներ), **<u>ք.Մեծամոր</u>**՝ (Մեծամորի 31 բնակավայր և Խոյ համայնք),

4) Գեղարքունիքի մարզ - **<u>ք. Գավառ՝</u>** (Գավառ համայնքի 12 բնակավայր), **<u>ք. Ճամբարակ՝</u>** (Ճամբարակ համայնքի 19 բնակավայր), **<u>ք. Մարտունի՝</u>** (Մարտունի համայնքի 19 բնակավայր), **<u>ք. Սևան՝</u>** (Սևան համայնքի 12 բնակավայր), **<u>ք. Վարդենիս</u>**՝ (Վարդենիս համայնքի 36 բնակավայր),

5) Լոռու մարզ - **<u>ք. Վանաձոր</u>**՝ (Վարաձոր համայնքի 4 բնակավայր, Փամբակ, Ֆիոլետովո, Լերմոնտովո համայնքներ), **<u>ք. Ալավերդի՝</u>** (Ալավերդի համայնքի 28 բնակավայր, Թումանյան համայնք), **<u>ք. Ստեփանավան</u>**՝ (Ստեփանավան համայնքի 4 բնակավայր, Գյուլագարակ, Լոռի բերդ համայնքներ), **<u>ք. Սպիտակ՝</u>** (Սպիտակ համայնքի 21 բնակավայր), **<u>ք. Տաշիր</u>**՝ (Տաշիր համայնքի 24 բնակավայր),

6) Կոտայքի մարզ - **<u>ք. Հրազդան՝</u>** (Հրազդան համայնքի 5 բնակավայր, Ծաղկաձոր համայնք), **<u>ք. Աբովյան՝</u>** (Աբովյան համայնքի 11 բնակավայր, Բյուրեղավան, Ակունք, Արզնի, Ջրվեժ և Գառնի համայնքներ), **<u>ք. Չարենցավան</u>**՝ (Չարենցավան համայնքի 6 բնակավայր), **<u>ք. Եղվարդ</u>**՝ (Նաիրի համայնքի 8 բնակավայր և Նոր Հաճըն համայնքի 9 բնակավայր),

7) Շիրակի մարզ - **ք. Գյումրի**՝ (Գյումրի քաղաք), **ք. Արթիկ**՝ (Արթիկ համայնքի 24 բնակավայր), **ք. Մարալիկ**՝ (Անի համայնքի 19 բնակավայր), **գ. Աշոցք**՝ (Աշոցք համայնքի 25 բնակավայր), **գ. Ամասիա՝** (Ամասիա համայնքի 26 բնակավայր), **գ. Ախուրյան**՝ (Ախուրյան համայնքի 35 բնակավայր),

8) Սյունիքի մարզ - **ք. Կապան**՝ (Կապան համայնքի 39 բնակավայր), **ք. Գորիս**՝ (Գորիս համայնքի 13 բնակավայր, Տաթև, Տեղ համայնքներ), **ք. Սիսիան՝** (Սիսիան համայնքի 36 բնակավայր), **ք. Քաջարան՝** (Քաջարան համայնքի 21 բնակավայր), **ք. Մեղրի**՝ (Մեղրի համայնքի 15 բնակավայր),

9) Վայոց ձորի մարզ - **ք. Եղեգնաձոր՝** (Եղեգնաձոր համայնքի 5 բնակավայր, Արենի, Եղեգնիս բնակավայր), **ք. Վայք**՝ (Վայք համայնքի 20 բնակավայր և Ջերկուկ համայնք),

10) Տավուշի մարզ - **ք. Իջևան՝** (Իջևան համայնքի 20 բնակավայր), **ք. Դիլիջան**՝ (Դիլիջան համայնքի 9 բնակավայր), **ք. Նոյեմբերյան**՝ (Նոյեմբերյան համայնքի 19 բնակավայր), **ք. Բերդ**՝ (Բերդ համայնքի 17 բնակավայր),

11) Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում՝ Աջափնյակ, Դավթաշեն, Ավան-Նորք-Մարաշ, Արաբկիր, Էրեբունի-Նուբարաշեն, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն,

9. Խաղերին կարող են մասնակցել նշված համայնքների և մոտակա համայնքների Հաստատությունները:

10. Ծրագրին մասնակցում են Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների բոլոր աշակերտները: **Ներդպրոցական փուլում անցկացվում են առանձին-առանձին մրցումներ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ դասարանների աշակերտների միջև, որի արդյունքում ձևավորվում են հավաքական թիմերը:**

1) 1-3-րդ դասարանների թիմի կազմը՝ 5 տղա, 5 աղջիկ, 1 մանկավարժ և 1 ներկայացուցիչ *(1-ին դասարան՝ 1 տղա, 1 աղջիկ, 2-րդ դասարան՝ 2 տղա, 2 աղջիկ և 3-րդ դասարան՝ 2 տղա, 2 աղջիկ),*

2) 4-6-րդ դասարանների թիմի կազմը՝ 5 տղա, 5 աղջիկ, 1 մանկավարժ և 1 ներկայացուցիչ) *(4-րդ դասարան՝ 1 տղա, 1 աղջիկ, 5-րդ դասարան՝ 2 տղա, 2 աղջիկ և 6-րդ դասարան՝ 2 տղա, 2 աղջիկ):*

11. Ծրագրի կազմակերպման և անցկացման կարգը տեղերում որոշում են կազմակերպիչները *(համայնքապետարաններ, մարզպետների աշխատակազմեր):*

12. Մրցույթի 2-րդ, 3-րդ և 4-րդ փուլերում թիմերի հավասար միավորների դեպքում առավելությունը տրվում է 5 մրցաձևերի յուրաքանչյուր վարժության արդյունքների համեմատականով (վայրկյան):

13. Մրցույթի 3-րդ՝ Հայաստանի Հանրապետության մարզային և Երևան քաղաքի փուլին պետք է մասնակցեն Երևան քաղաքի 10 վարչական շրջաններից 1-ին տեղը, Հայաստանի Հանրապետության համայնքային փուլում 1-ին, 2-րդ տեղերը գրաված թիմերը: Մրցումների անցկացման կարգում կարող են կատարվել մասնակի լրացումներ և փոփոխություններ՝ համաձայնեցնելով Նախարարության հետ:

14. Մրցույթի 4-րդ՝ հանրապետական եզրափակիչ փուլին մասնակցում են Հայաստանի Հանրապետության մարզային և Երևանի քաղաքային փուլում 1-ին տեղը գրաված թիմերը:

V. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

15. Մրցույթի 2-րդ փուլում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված դպրոցներին տրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրեր:

16. Մրցույթի 3-րդ փուլում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված դպրոցներին տրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրեր, պարգևատրվում են գավաթներով:

17. Մրցույթի 4-րդ՝ հանրապետական եզրափակիչ փուլում ընդհանուր թիմային հաշվարկով 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված հանրակրթական դպրոցներին տրվում են Նախարարության հավաստագրեր, պարգևատրվում են մեդալներով, գավաթներով, դրամական մրցանակներով՝ մարզագույք ձեռք բերելու համար:

18. Մրցույթի հանրապետական եզրափակիչ փուլի 4-11-րդ տեղերը գրաված հանրակրթական դպրոցների երկու տարիքային խմբերը պարգևատրվում են մարզագույքով և շնորհակալագրերով:

19. 4-րդ հանրապետական փուլի մասնակից բոլոր երեխաներին տրվում են նվերներ:

20. Միջոցառման ծախսերն իրականացվում են Հայաստանի Հանրապետության տարեկան պետական բյուջեով նախատեսված ծրագրի շրջանակում:

VI. ԾԱԽՍԵՐԸ

21. Մրցույթի 2-րդ փուլում մրցանակային տեղեր գրաված դպրոցներին հատկացվող հավաստագրերի ծախսերը հոգում է Նախարարությունը: Մրցույթի 3-րդ փուլում մրցանակային տեղեր գրաված դպրոցներին հատկացվող հավաստագրերի, գավաթների, մրցավարների սննդի ծախսերը հոգում է Նախարարությունը, իսկ մասնակից դպրոցների գործուղման հետ կապված ծախսերը հոգում են գործուղող կազմակերպությունները:

22. Հանրապետական եզրափակիչ փուլի կազմակերպման և անցկացման հետ կապված ծախսերը *(մարզագույք, մրցավարների և բժշկի սնունդ, մրցավարների դրամական պարգևատրում, մրցավարների մարզահագուստ, մարզակառույցների վարձակալում, ռադիոհանգույց, հաղորդավար, մրցանակային տեղեր գրաված թիմերին՝ հավաստագրեր, գավաթներ, 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված հանրակրթական դպրոցներին դրամական պարգևներ՝ 1-ին տեղերը գրաված դպրոցները 450,000 ՀՀ դրամ, 2-րդ տեղերը գրաված դպրոցները 350,000 ՀՀ դրամ և 3-րդ տեղերը գրաված դպրոցները 250,000 ՀՀ դրամ, 4-11-րդ տեղերը գրաված յուրաքանչյուր դպրոցին շնորհակալագիր, մարզագույք, մասնակից բոլոր երեխաներին նվերներ, գրենական պիտույքներ)* և մասնակից թիմերի գործուղման ծախսերը *(գիշերավարձ, սննդի ընդունման օերկան չափի փոխհատուցում, ճանապարհածախս)* հոգում է Նախարարությունը:

VII. ՀԱՅՏԵՐԸ

23. Միջոցառման 2-րդ փուլի մասնակցության հայտերը ներկայացվում են Հայաստանի Հանրապետության համայնքապետարանների և Երևան քաղաքի վարչական շրջանների համապատասխան բաժիններ, իսկ 3-րդ փուլի մասնակցության հայտերը ներկայացվում են

Երևանի քաղաքապետարանի և Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերի համապատասխան վարչություններ կամ բաժիններ:

24. Միջոցառման 1-ին փուլի անցկացման և մասնակցության հաշվետվությունները ներկայացվում են համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության համայնքապետարանների, Երևանի վարչական շրջանների համապատասխան վարչություն կամ բաժին:

25. 2-րդ փուլի հաշվետվությունները ներկայացվում են համապատասխանաբար Երևանի քաղաքապետարան և Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմեր համապատասխան վարչություն կամ բաժին:

26. 3-րդ փուլի մրցումների ավարտից հետո՝ 5-օրյա ժամկետում, հաշվետվությունները ներկայացվում են Նախարարություն՝ նշելով միջոցառման համապատասխան փուլերին մասնակցած հանրակրթական դպրոցների և աշակերտների քանակը:

27. Հանրապետական եզրափակիչ փուլի մասնակցության նախնական հայտը Նախարարություն է ներկայացվում մինչև 2025 թ. ապրիլի 28-ը: Նշված ժամկետից ուշ ներկայացված հայտերը չեն ընդունվում:

28. Մրցույթի եզրափակիչ փուլին հարգելի պատճառներով մասնակցել չկարողացող դպրոցների փոխարեն պետք է մասնակցի հաջորդ տեղը գրաված դպրոցը:

29. Մրցույթի եզրափակիչ փուլի մասնակցության անվանական հայտը մրցավարական հանձնաժողովին է ներկայացվում մրցումների օրը՝ հաստատված դպրոցի տնօրենի և բուժքրոջ կողմից: Միաժամանակ ներկայացվում է՝

1) աշակերտների ծննդյան վկայականը,

2) տեղեկանք դպրոցից՝ լուսանկարով:

30. Հայտում անհրաժեշտ է նշել “dasaran.am” կայքում աշակերտի էլեկտրոնային համարը:

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ 1-3-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ «ՍՊՈՐՏԼԱՆԴԻԱ»» ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ

Վարժություն № 1. Խաղային փոխանցավազք

Թիմի կազմը՝ 5 տղա և 5 աղջիկ

Առաջին մասնակից երեխան *(տղա)* մրցավարի հրահանգով վազքով մոտենում է ներքնակին, կատարում գլուխկոնձի առաջ *(մեկնարկից ներքնակ՝ 3 մ)*, վերցնում է ներքնակի առջև դրված օղակը *(օղակի տրամագծի չափը՝ 25-30 սմ)*, ոլորապտույտ վազքով արագ անցնում է 5 կանգնակների միջով *(ներքնակից մինչև 1-ին կանգնակը՝ 2 մետր, կանգնակների հեռավորությունը՝ 1,5 մետր, վերջին կանգնակից մինչև նախորդը՝ 7 մ)*, վազքով մոտենում է կանգնակին *(30-50 սմ բարձրությամբ)*, օղակը գցում է կանգնակի վրա, այն շրջանցում և ուղիղ գծով արագ վերադառնում մեկնարկային գիծ՝ ձեռքի հպումով էստաֆետը փոխանցելով հաջորդ մասնակցին:

Նույն վարժությունը կատարում են թիմի մյուս 4 տղաները: Վերջին մասնակից տղան վարժության ավարտից հետո էստաֆետը արագ հանձնում է առաջին մասնակից աղջկան:

Աղջիկը կատարում է նույն վարժությունը առանց օղակի: Վազքով մոտենում է դիմացի կանգնակին, վերցնում է մեկ օղակ, վազքով մոտենում է ներքնակի մոտ տեղադրված կանգնակին *(հեռավորությունը մեկնարկից կանգնակ՝ 3 մ)*, օղակը գցում է կանգնակի վրա և ինքը կանգնում շարքի վերջում: Նույնը կատարում են թիմի մնացած 4 աղջիկները:

Հաղթող է ճանաչվում այն թիմը, որը բոլորից արագ է կատարել վարժությունը *(չափման միավորը՝ վայրկյան)*:



Ծանոթություն

Յուրաքանչյուր մեկ կանգնակ գցելու դեպքում արդյունքին ավելանում է ***մեկ*** *փուգանային վայրկյան:*

- Կանգնակի շրջանցելը պարտադիր պայման է, եթե մասնակիցը չի շրջանցում սպանում է ***երկու*** *փուգանային վարկյան:*

- Օղակի գցումը կանգնակին պարտադիր պայման է. հակառակ դեպքում կանգնակին յուրաքանչյուր չգցած օղակի համար կտրվի ***մեկ*** *փուգանային վայրկյան:*

Վարժություն № 2. *Փոխանցավազք արգելքների հաղթահարումով*

Թիմի կազմը՝ 5 տղա և 5 աղջիկ

Մրցավարի հրահանգի համաձայն 1-ին մասնակիցը վազքով մոտենում է ներքնակին, կատարում է գլուխկոնծի առաջ *(տարածությունը մեկնարկից ներքնակ՝ 2 մ)*, անցնում է պարկի միջով *(պարկի երկարությունը՝ 3 մետր, պարկի լայնություն՝ 1 մետր, ներքնակից պարկ հեռավորությունը՝ 2 մետր)*, վազքով մոտենում է գետնին մեկ ուղղությամբ դրված մարմնամարզական 3 օղակներին *(օղակների հեռավորությունը մեկը մյուսից՝ 2 մետր, պարկից մարմնամարզական օղակ՝ 5-6 մետր)*, օղակները հաջորդաբար անցկացնելով գլխի վրայով՝ դնում է գետնին *(վերջին օղակից կանգնակ՝ 3-5 մետր)*, վազքով շրջանցում է կանգնակը և վերադառնում մեկնարկ՝ էստաֆետը հանձնելով խաղընկերոջը: Նույնը կատարում են թիմի բոլոր անդամները:

Հաղթող է ճանաչվում այն թիմը, որը բոլորից արագ է ավարտում խաղը *(վայրկյան)*:



Ծանոթություն

- Յուրաքանչյուր մարմնամարզական օղակի միջով անցնելը պարտադիր պայման է. հակառակ դեպքում կտրվի ***երեք*** *փուգանային վայրկյան:*

*- Գլուխկոնծի և անցում պարկի միջով վարժության կատարումը պարտադիր է. դրանցից որևէ մեկը չկատարելու դեպքում կտրվի **երկու** տուգանային վայրկյան:*

Վարժություն № 3. *Փոխանցավազք մարմնամարզական օղակներով*

Թիմի կազմը՝ 5 տղա և 5 աղջիկ

Առաջին մասնակիցը՝ օղակի մեջ մտած, մեկնարկային գծից վազքով մոտենում է նշակետին *(12 մ)*, որտեղ կանգնած են մյուս մասնակիցները: Երկրորդ մասնակիցը մտնում է օղակի մեջ, և երկուսով վերադառնում են մեկնարկային գիծ: Առաջին մասնակիցը մնում է մեկնարկային գծում, իսկ երկրորդ մասնակիցը՝ օղակի մեջ մտած, վազքով մոտենում է հաջորդ՝ 3-րդ մասնակցին, և միասին վազքով վերադառնում են մեկնարկային գիծ, և այդպես մնացած բոլոր մասնակիցները հաջորդաբար կատարում են վարժությունը: Վարժությունը կատարվում է այնքան ժամանակ, մինչև թիմի բոլոր մասնակիցները տեղափոխվեն մեկնարկային գիծ: Հաղթում է այն թիմը, որը առաջինն է ավարտում վարժությունը *(վայրկյան)*:



Ծանոթություն

*- Վարժությունը պետք է կատարվի նշագծերից դուրս: Եթե վարժությունը կատարվում է երկու նշագծերի ներսում, յուրաքանչյուր մասնակից ստանում է **երկու** տուգանային վայրկյան:*

Վարժություն № 4. Վարժություն մանկական երկանիվ հեծանվով (կցորդ անիվներով)

Թիմի կազմը՝ 5 տղա, 5 աղջիկ:

Մրցավարի հրահանգի համաձայն յուրաքանչյուր թիմի 1-ին համարի երեխան երկանիվ մանկական հեծանիվը ոլորապտույտ վարելով անցնում է 4 գուրզերի միջով *(մեկնարկից գուրզեր՝ 3 մետր, գուրզերի հեռավորությունը՝ 2 մետր)*, անցնում է արգելքի տակով, որպեսզի կանգնակի ձողը վայր չընկնի *(կանգնակի բարձրությունը՝ 90-100 սմ, ձողի երկարությունը՝ 1,2 մետր, վերջին՝ 5-րդ կանգնակից արգելք՝ 3 մետր)*, հեծանիվը վարելով անցնում է շարժական կամրջակի վրայով *(արգելքից շարժական կամրջակ՝ 3 մետր,*

կամրջակի չափերը՝ 1,10 մ x 0.75 մ, բարձրությունը 5-7 սմ), արագորեն շրջանցում է հսկիչ դրոշը *(կամրջակից կանգնակ՝ 5-10 մետր)* և վերադառնում՝ մեկնարկը հանձնելով խաղընկերներին, և այդպես՝ թիմի բոլոր անդամները:

Հաղթող է ճանաչվում այն թիմը, որը բոլորից արագ է ավարտում վարժությունը:



Ծանոթություն

*- Յուրաքանչյուր մեկ կանգնակ գցելու դեպքում արդյունքին ավելանում է **մեկ** տուգանային վայրկյան:*

*- Երկանիվ մանկական հեծանվով յուրաքանչյուր կանգնակի միջով անցնելը պարտադիր պայման է. հակառակ դեպքում կատարած յուրաքանչյուր սխալի համար կտրվի **մեկ** տուգանային վայրկյան:*

*- Արգելքի տակով անցնելիս չպետք է ձողին դիպչել, որպեսզի կանգնակի վրայի ձողը վայր չընկնի: Հակառակ դեպքում մասնակիցը կստանա **մեկ** տուգանային վայրկյան:*

Վարժություն № 5. *«Օլիմպիական խորհրդանիշի հավաքում»*

Թիմի կազմը՝ 5 տղա և 5 աղջիկ

Առաջին մասնակիցը՝ աղջիկը, մրցավարի հրահանգով ոլորապտույտ վազքով արագ անցնում է մեկ ուղղությամբ դրված 5 կանգնակների միջով (*մեկնարկից մինչև 1-ին կանգնակ՝ 3 մետր),* վազքով մոտենում է ներքնակին, կատարում գլուխկոնծի առաջ վարժությունը *(վերջին կանգնակից ներքնակ՝ 3 մետր, գուրզերի հեռավորությունը մեկը մյուսից 2 մետր),* մոտենում է կանգնակին, վերցնում է օղակը *(օղակի տրամագծի չափը՝ 30 սմ, հեռավորությունը ներքնակից կանգնակ՝ 5-10 մետր) և* օղակը ձեռքին վազքով վերադառնում մեկնարկային գիծ, օղակը հանձնում տղային: Տղան՝ օղակը ձեռքին, կատարում է վարժությունը, մոտենում է վահանակին *(վահանակի չափսն է՝ 110 սմ x 65 սմ, 65 սմ բարձրությամբ)* օղակը կախում է վահանակի վրա ամրացված փոքրիկ կախիչից, համապատասխան գույնի վրա *(կապույտ օղակը՝ կապույտի, սևը՝ սևի, կարմիրը՝ կարմիրի, դեղինը՝ դեղինի և կանաչը՝ կանաչի)* և արագ վերադառնում է մեկնարկային գիծ՝ ձեռքի հպումով էստաֆետը փոխանցելով հաջորդ մասնակցին՝ աղջկան: Վարժությունը նույնությամբ կատարում են թիմի բոլոր անդամները՝ մինչև օլիմպիական խորհրդանիշի

հավաքում: Հաղթող է ճանաչվում այն թիմը, որը բոլորից արագ է ավարտում վարժությունը *(վայրկյան):*

Վահանակի վրա օղակների տեղադրումը պարտադիր է. հակառակ դեպքում թիմին կգրանցվի տուգանային միավոր *(1 վայրկյան):*



Ծանոթություն

*- Յուրաքանչյուր մեկ կանգնակ գցելու դեպքում արդյունքին ավելանում է **մեկ** փուգանային վայրկյան:*

*- Համապատասխան գույնի օղակի կախումը վահանակին պարտադիր պայման է: Հակառակ դեպքում նշանակվում է փուգանք. ընդհանուր արդյունքին ավելանում է **երկու** փուգանային վայրկյան:*

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ 4-6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ «ՍՊՈՐՏԼԱՆԴԻԱ»» ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ

Վարժություն № 1. *Խաղային փոխանցավազք*

Թիմի կազմը՝ 5 տղա և 5 աղջիկ

Առաջին մասնակից երեխան *(տղա)* մրցավարի հրահանգով վազքով մոտենում է ներքնակին, կատարում գլուխկոնծի առաջ *(մեկնարկից ներքնակ՝ 3 մ)*, վերցնում է ներքնակի առջև դրված օղակը *(օղակի տրամագծի չափը՝ 25-30 սմ), ոլորապտույտ վազքով արագ անցնում է 5 կանգնակների միջով (ներքնակից մինչև 1-ին կանգնակը՝ 2 մետր, կանգնակների հեռավորությունը՝ 1,5 մետր, վերջին կանգնակից մինչև նախորդը՝ 7 մ)*, վազքով մոտենում է կանգնակին *(30-50 սմ բարձրությամբ)*, օղակը գցում է կանգնակի վրա, այն շրջանցում և ուղիղ գծով արագ վերադառնում մեկնարկային գիծ՝ ձեռքի հպումով էստաֆետը փոխանցելով հաջորդ մասնակցին:

Նույն վարժությունը կատարում են թիմի մյուս 4 տղաները: Վերջին մասնակից տղան վարժության ավարտից հետո էստաֆետը արագ հանձնում է առաջին մասնակից աղջկան: Աղջիկը կատարում է նույն վարժությունը առանց օղակի: Վազքով մոտենում է դիմացի կանգնակին, վերցնում է մեկ օղակ, վազքով մոտենում է եզրագծում տեղադրված կանգնակին, օղակը գցում է կանգնակի վրա և ինքը կանգնում շարքի վերջում: Նույնը կատարում են թիմի մնացած 4 աղջիկները:

Հաղթող է ճանաչվում այն թիմը, որը բոլորից արագ է կատարել վարժությունը *(չափման միավորը՝ վայրկյան):*



Ծանոթություն

*- Յուրաքանչյուր մեկ կանգնակ գցելու դեպքում արդյունքին ավելանում է **մեկ** փուգանային վայրկյան:*

*- Կանգնակի շրջանցելը պարտադիր պայման է, եթե մասնակիցը չի շրջանցում սպանում է **երկու** փուգանային վարկյան:*

*- Օղակի գցումը կանգնակին պարտադիր պայման է. հակառակ դեպքում կանգնակին յուրաքանչյուր չգցած օղակի համար կտրվի **մեկ** փուգանային վայրկյան:*

Վարժություն № 2. *Փոխանցավազք արգելքների հաղթահարումով*

Թիմի կազմը՝ 5 տղա և 5 աղջիկ

Մրցավարի հրահանգի համաձայն 1-ին մասնակիցը վազքով մոտենում է ներքնակին, կատարում է գլուխկոնծի առաջ *(տարածությունը մեկնարկից ներքնակ՝ 2 մ)*, անցնում է պարկի միջով *(պարկի երկարությունը՝ 3 մետր, պարկի տրամագիծը՝ 1 մետր, ներքնակից պարկ հեռավորությունը՝ 2 մետր)*, վազքով մոտենում է գետնին մեկ ուղղությամբ դրված մարմնամարզական 3 օղակներին *(օղակների հեռավորությունը մեկը մյուսից՝ 2 մետր, պարկից մարմնամարզական օղակ՝ 5-6 մետր)*, օղակները հաջորդաբար անցկացնելով գլխի վրայով՝ դնում է գետնին *(վերջին օղակից կանգնակ՝ 3-5 մետր)*, վազքով շրջանցում է կանգնակը և վերադառնում մեկնարկ՝ էստաֆետը հանձնելով խաղընկերոջը: Նույնը կատարում են թիմի բոլոր անդամները:

Հաղթող է ճանաչվում այն թիմը, որը բոլորից արագ է ավարտում խաղը *(վայրկյան)*:



Ծանոթություն

*- Յուրաքանչյուր մարմնամարզական օղակի միջով անցնելը պարտադիր պայման է. հակառակ դեպքում կտրվի **երեք** փուգանային վայրկյան:*

*- Գլուխկոնծի և անցում պարկի միջով վարժության կատարումը պարտադիր է. դրանցից որևէ մեկը չկատարելու դեպքում կտրվի **երկու** փուգանային վայրկյան:*

Վարժություն № 3. *Փոխանցավազք մարմնամարզական օղակներով*

Թիմի կազմը՝ 5 տղա և 5 աղջիկ

Առաջին մասնակիցը՝ օղակի մեջ մտած, մեկնարկային գծից վազքով մոտենում է նշաձետին *(12 մ)*, որտեղ կանգնած են մյուս մասնակիցները: Երկրորդ մասնակիցը մտնում է օղակի մեջ, և երկուսով վերադառնում են մեկնարկային գիծ: Առաջին մասնակիցը մնում է մեկնարկային գծում, իսկ երկրորդ մասնակիցը՝ օղակի մեջ մտած, վազքով մոտենում է հաջորդ՝ 3-րդ մասնակցին, և միասին վազքով վերադառնում են մեկնարկային գիծ, և այդպես մնացած բոլոր մասնակիցները հաջորդաբար կատարում են վարժությունը: Վարժությունը կատարվում է այնքան ժամանակ, մինչև թիմի բոլոր մասնակիցները տեղափոխվեն մեկնարկային գիծ: Հաղթում է այն թիմը, որը առաջինն է ավարտում վարժությունը *(վայրկյան)*:



Ծանոթություն

*- Վարժությունը պետք է կատարվի նշագծերից դուրս: Եթե վարժությունը կատարվում է երկու նշագծերի ներսում, յուրաքանչյուր մասնակից ստանում է **երկու** տուգանային վայրկյան:*

Վարժություն № 4. *Խաղային փոխանցավազք*

Թիմի կազմը՝ 5 տղա և 5 աղջիկ

Մրցավարի հրահանգի համաձայն 1-ին մասնակիցը՝ պարկի մեջ մտած *(պարկի երկարությունը՝ 130 սմ., լայնությունը՝ 60 սմ.)*, ցատկումներով մոտենում է նախատեսված նշակետին *(մեկնարկից նշակետ՝ 8 մետր)*, պարկը վայր է դնում, մարմնամարզական օղակի մեջ, վերցնում է բասկետբոլի գնդակը, նշակետի մոտից վարելով՝ մոտենում է տուգանային հրապարակ և կատարում մեկ նետում օղակի տակից (*նշակետից բասկետբոլի օղակ՝ 8-10 մետր)*: Նետում կատարելուց հետո մասնակիցը վերցնում է գնդակը, վարելով վերադառնում է նշակետ: Բասկետբոլի գնդակը տեղադրում է նախատեսված տեղում, վերցնում է պարկը, վազքով վերադառնում է մեկնարկային գիծ, էստաֆետը հանձնում խաղընկերոջը: Դիպուկ նետման համար տվյալ մասնակիցը վաստակում է 3 բոնուսային միավոր:

Նույնը կատարում են թիմի բոլոր անդամները:

Հաղթող է ճանաչվում այն թիմը, որը բոլորից արագ է կատարում վարժությունը *(վայրկյան)*:

Անհրաժեշտ մարզագույքը՝ պարկ, մարմնամարզական օղակներ, բասկետբոլի գնդակ:



Ծանոթություն

*- Պարկով վարժությունը պարտադիր պայման է, եթե վարժությունը չի կատարվում, ապա յուրաքանչյուր մասնակից ստանում է **10** տուգանային վայրկյան:*

*- Յուրաքանչյուր մասնակցի դիպուկ նետման համար, թիմը ստանում է **երեք** բոնուսային միավոր (վայրկյան), որը ցույց տված արդյունքից հանվում է:*

*- Գնդակի նվազագույն վարումը պետք է լինի առնվազն երկու անգամ: Հակառակ դեպքում տրվում է տուգանային միավոր (ցույց տված արդյունքին գումարվում է **մեկ** տուգանային վայրկյան):*

Վարժություն № 5. *«Օլիմպիական խորհրդանիշի հավաքում»*

Թիմի կազմը՝ 5 տղա և 5 աղջիկ

Առաջին մասնակիցը՝ աղջիկը, մրցավարի հրահանգով ոլորապտույտ վազքով արագ անցնում է մեկ ուղղությամբ դրված 5 կանգնակների միջով (*մեկնարկից մինչև 1-ին կանգնակ՝ 3 մետր)*, վազքով մոտենում է ներքնակին, կատարում գլուխկոնծի առաջ վարժությունը *(վերջին կանգնակից ներքնակ՝ 3 մետր, գուրզերի հեռավորությունը մեկը մյուսից 2 մետր)*,

մոտենում է կանգնակին, վերցնում է օղակը *(օղակի տրամագծի չափը՝ 30 սմ, հեռավորությունը ներքնակից կանգնակ՝ 5-10 մետր) և* օղակը ձեռքին վազքով վերադառնում մեկնարկային գիծ, օղակը հանձնում տղային: Տղան՝ օղակը ձեռքին, կատարում է վարժությունը, մոտենում է վահանակին *(վահանակի չափսն է՝ 110 սմ x 65 սմ, 65 սմ բարձրությամբ)* օղակը կախում է վահանակի վրա ամրացված փոքրիկ կախիչից, համապատասխան գույնի վրա *(կապույտ օղակը՝ կապույտի, սևը՝ սևի, կարմիրը՝ կարմիրի, դեղինը՝ դեղինի և կանաչը՝ կանաչի)* և արագ վերադառնում է մեկնարկային գիծ՝ ձեռքի հպումով էստաֆետը փոխանցելով հաջորդ մասնակցին՝ աղջկան: Վարժությունը նույնությամբ կատարում են թիմի բոլոր անդամները՝ մինչև օլիմպիական խորհրդանիշի հավաքում: Հաղթող է ճանաչվում այն թիմը, որը բոլորից արագ է ավարտում վարժությունը *(վայրկյան):*

Վահանակի վրա օղակների տեղադրումը պարտադիր է. հակառակ դեպքում թիմին կգրանցվի տուգանային միավոր *(1 վայրկյան):*



Ծանոթություն

- Յուրաքանչյուր մեկ կանգնակ գցելու դեպքում արդյունքին ավելանում է ***մեկ*** *տուգանային վայրկյան:*

- Համապատասխան գույնի օղակի կախումը վահանակին պարտադիր պայման է: Հակառակ դեպքում նշանակվում է տուգանք. ընդհանուր արդյունքին ավելանում է ***երկու*** *տուգանային վայրկյան:*

Հավելված № 2
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2024 թվականի նոյեմբերի 19 -ի № 2128 - Ա/2 հրամանի

ՀԱՅՏ

2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՆՑԿԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ 1-3-ՐԴ ԵՎ 4-6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ «ՍՊՈՐՏԼԱՆԴԻԱ»» ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ

ՀՀ ----------մարզ, քաղաք ------- ---------- 2024 թ.

№	Ազգանուն, անուն	Ծննդյան օր, ամիս, տարեթիվ	Անձնագրի կամ ծննդականի տվյալները	Հասցեն	Դպրոց-դասարան
1.					
2.					
3.					
4.					
5.					
6.					
7.					
8.					
9.					
10.					

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ՝ ----------/----------/

ԹԻՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝ ----------/----------/

ԲԺԻՇԿ՝ ----------/----------/

kanonakarg25-1.pdf
file:///C:/Users/Admin/Downloads/kanonakarg25-1.pdf